ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ

ԱՄՓՈՓԻՉ ՀԵԿՈՒՅՑ

ՀՏԴ 324(042.3)
ԳՄԴ 66.042.11
Վ 192

Դիտորդական առաքելությունն իրականացվում է Միացյալ Թագավորության միջազգային զարգացման աջակցության շրջանակում, Միացյալ Թագավորության կառավարության կողմից: Արտահայտված տեսակետները պարտադիր չէ, որ արտացոլեն Միացյալ Թագավորության կառավարության պաշտոնական դիրքորոշումը:

Վ 192 Վաղարշապատ համայնքի ավագանու ընտրությունների դիտորդական առաքելության ամփոփիչ զեկույց / «Ականատես» դիտորդական առաքելություն.- Եր.: «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակռուպցիոն կենտրոն» ՀԿ, 2025.- 30 էջ:

Սույն հրապարակումն ամփոփում է Վաղարշապատ համայնքի ավագանու 2025 թ. ընտրությունների ընթացքում «Ականատես» դիտորդական նախաձեռնության երկարաժամկետ և կարճաժամկետ դիտարկման արդյունքները:

ՀՏԴ 324(042.3)
ԳՄԴ 66.042.11

ISBN 978-9939-1-2205-2
© «Ականատես» դիտորդական առաքելություն

Երևան 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 3
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4
ԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 4
ԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ 5
Ընտրություններին նախորդող զարգացումներ 5
Մասնակից ուժերի ընտրական ցուցակների վերլուծություն 6
Քաղաքական ուժերի նախընտրական ծրագրեր 10
Բարեգործության արգելքի խախտումներ 10
Վարչական ռեսուրսի չարաշահում 11
Նախընտրական ֆինանսավորմանն առնչվող խնդիրներ 13
Կողմնակալ դիտորդական առաքելություններ 18
Ատելության խոսք 19
Քարոզչության կանոնների խախտումներ 20
Քվեարկության օր 21
Քվեարկության արդյունքներ և մանդատների բաշխում 24
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 25
ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 30

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոց
ԸԸՀ	Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով
ԺՊ	Ժամանակավոր պաշտոնակատար
ԿԸՀ	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
ԿԿՀ	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՎՎԾ	Վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն
ՏԸՀ	Տեղամասային ընտրական հանձնաժողով
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՏԿԵՆ	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՔՊ	Քաղաքացիական պայմանագիր

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վաղարշապատ համայնքի 2025 թ. ավագանու ընտրությունները տեղի ունեցան վարչատարածքային միավորման, քաղաքական բևեռվածության, կոռուպցիոն սկանդալի և հանրային սպասումների աճի պայմաններում, ինչն իր հերթին մեծացրեց ընտրական գործընթացների նկատմամբ հանրային վերահսկողության և թափանցիկության պահանջը: Այդ համատեքստում «Ականատես» դիտորդական նախաձեռնության դիտարկումն ուղղված էր ոչ միայն քվեարկության օրվա, այլև ամբողջ նախընտրական շրջանի, ընտրական վարչարարության, նախընտրական քարոզչության, կուսակցությունների ֆինանսավորման և ներգրավված դերակատարների վարքագծի ամբողջական գնահատմանը:

Դիտորդական առաքելության նպատակն էր բացահայտել այն խնդիրներն ու միտումները, որոնք ազդում են ընտրությունների որակի, մրցակցային միջավայրի և ընտրողների ազատ կամարտահայտման վրա: Սույն զեկույցը ներկայացնում է նախընտրական, քվեարկության օրվա և հետընտրական փուլերում արձանագրված զարգացումները, արձանագրված խախտումները, հավաքագրված տվյալների վերլուծությունը, ինչպես նաև այն խնդիրները, որոնք համակարգային բնույթ ունեն և պահանջում են ինստիտուցիոնալ բարեփոխումներ:

«Ականատես»-ն իր երախտագիտությունն է հայտնում ընտրությունների դիտարկման գործընթացում ներգրավված դիտորդներին, համակարգողներին, իրավաբաններին և այլ անձանց, որոնց ակտիվ և նվիրված աշխատանքի շնորհիվ հնարավոր եղավ ապահովել արդյունավետ և որակյալ դիտորդական առաքելություն:

ԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

«Ականատես» դիտորդական նախաձեռնությունը 2025 թ. հոկտեմբերի 15-ից նոյեմբերի 20-ն ընկած ժամանակահատվածում դիտարկել է Վաղարշապատ համայնքի ավագանու ընտրությունները՝ գնահատելու ընտրական գործընթացների համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության (ՀՀ) օրենսդրությանը, ինչպես նաև ազատ, արդար ու թափանցիկ ընտրությունների համար սահմանված միջազգային նորմերին ու լավագույն փորձին:

Դիտարկումն իրականացվել է գրասենյակային հետազոտությունների, ինչպես նաև երկարաժամկետ և կարճաժամկետ դիտորդների կողմից կատարված դաշտային ուսումնասիրությունների միջոցով: Գրասենյակային հետազոտությունների թիրախում եղել են ընտրություններին նախորդող և նախընտրական միջավայրը ձևավորող զարգացումները, կուսակցությունների նախընտրական ցուցակների, ֆինանսավորման ու ծախսերի, վարչական ռեսուրսի օգտագործման հետ կապված խնդիրները և այլ առնչվող գործընթացներ: Տվյալների հավաքագրումը կատարվել է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ), Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (ԿԿՀ) կայքերի և առցանց այլ աղբյուրների վերլուծության, պաշտոնական հարցումների, մամուլի լուսաբանումներին և սոցիալական ցանցերին հետևելու միջոցով:

Երկարաժամկետ դիտորդական առաքելության շրջանակներում 2 երկարաժամկետ դիտորդներ ուսումնասիրել են նախընտրական և հետընտրական գործընթացները թիվ 14 ընտրատարածքային հանձնաժողովի (ԸԸՀ) սպասարկման տարածքում, այդ թվում՝ ընտրական վարչարարությունը, կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների

շտաբների գործունեությունը, նախընտրական քարոզչությունը, վարչական ռեսուրսի օգտագործումը, ընտրական գործընթացի տարբեր մասնակիցների դերակատարումը: Հավաքագրվել են քանակական և որակական տվյալներ անմիջական դիտարկումների, հանդիպումների, հարցազրույցների, քարոզչական միջոցառումներին, մամուլի լուսաբանումներին և սոցիալական ցանցերին հետևելու միջոցով՝ ըստ անհրաժեշտության՝ տեղերում հանդիպելով ընտրական գործընթացի դերակատարների հետ: Մասնավորապես, իրականացվել է 3 այց՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողով, 7 այց՝ կուսակցությունների և դաշինքների նախընտրական շտաբներ, ինչպես նաև դիտարկվել է 6 նախընտրական միջոցառում: Բացի այդ, անցկացվել է 8 հանդիպում համայնքների բնակիչների հետ: Երկարաժամկետ դիտորդները նաև հետևել են քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովների (ՏԸՀ) կողմից ընտրական փաստաթղթերը՝ ԸԸՀ ներկայացնելու և քվեարկության արդյունքներն աղյուսակավորելու գործընթացներին:

Կարճաժամկետ դիտորդներն իրականացրել են քվեարկության գործընթացի և արդյունքների ամփոփման դիտարկումը: Քվեարկության օրվա հսկողությունն իրականացվել է 10 շրջիկ դիտորդների ներգրավմամբ, որոնք այցելել են բոլոր 47 ընտրատեղամասերը, հետևել են ընտրատեղամասերում, դրանց շրջակայքում, նախընտրական շտաբների մոտ առկա իրավիճակին, ինչպես նաև՝ դիտարկել ընդհանուր մթնոլորտը համայնքում:

Դիտարկման տարբեր փուլերում ստացված ոչ պաշտոնական տվյալները ստուգվել են մի քանի անկախ աղբյուրների միջոցով տեղեկատվության ճշգրտությունն ու հավաստիությունն ապահովելու նպատակով:

Դիտորդական առաքելության ընթացքում հավաքագրված տվյալները, բացահայտումներն ու վերլուծություններն ամփոփվել են «Ականատես»-ի ընթացիկ տեղեկանքներում, ֆեյսբուքյան էջում հրապարակվող դիտորդական օրագրում և մի շարք հարցազրույցներում:

ԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Վաղարշապատ համայնքի ավագանու ընտրությունների դիտարկման արդյունքները ներկայացված են ստորև՝ ըստ ընտրական գործընթացի փուլերի ու ժամանակահատվածների: Դրանք ներառում են ընտրություններին նախորդող և նախընտրական միջավայրը պայմանավորող զարգացումները, պաշտոնական նախընտրական քարոզչության, քվեարկության օրվա և հետընտրական փուլերը:

Ընտրություններին նախորդող զարգացումներ

Վաղարշապատի խոշորացված համայնքի ավագանու ընտրություններին նախորդել են մի շարք իրադարձություններ, որոնց և հետևել է ընտրությունների անցկացումը:

Նախևառաջ, Վաղարշապատ համայնքի (քաղաք Էջմիածին և Ոսկեհատ գյուղի) ղեկավար Դիանա Գասպարյանը 2025 թվականին հայտարարեց պաշտոնից հրաժարվելու մասին: Հրաժարականը Գասպարյանը հիմնավորեց անձնական կյանքի առաջնահերթությամբ և հանրային գործունեությունը դադարեցնելու հետ մեկտեղ նշեց, որ ավագանու մանդատը ևս վայր է դնում: Պետք է նշել, որ սույն հրաժարականին նախորդել էին մամուլի բազմաթիվ հրապարակումներ և հետաքննություններ, որոնք առնչվում էին համայնքապետի և նրա

մերձավորների գույքային և տնտեսական գործունեությանը: Գասպարյանի հրաժարականից շուրջ մեկ ամիս անց Հակակոռուպցիոն կոմիտեն մեղադրանք առաջադրեց վերջինիս նկատմամբ:

Գասպարյանի հրաժարականից հետո Վաղարշապատի ավագանիում մեծամասնություն ունեցող «Քաղաքացիական պայմանագիր» (ՔՊ) խմբակցությունը հնարավորություն ուներ ընտրելու համայնքի ղեկավար սեփական ավագանու կազմից, սակայն համայնքի ղեկավար ընտրելու նպատակով կազմակերպվող նիստերը մի քանի անգամ տապալվեցին ՔՊ խմբակցության՝ նիստերին չներկայանալու պատճառով: Այս իրավիճակում, համաձայն օրենսդրության, վարչապետը Վաղարշապատ համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար (ԺՊ) նշանակեց Արգիշտի Մեխակյանին, որը տվյալ պահին զբաղեցնում էր Արմավիրի մարզպետի պաշտոնը, իսկ նախկինում հանդիսացել էր Արմավիրի մարզի Խոյ համայնքի ղեկավարը: Սպասվող ավագանու ընտրություններում Մեխակյանը դարձավ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ցուցակի առաջին համարը՝ համայնքի ղեկավարի թեկնածուն:

Վերոնշյալ գործընթացներին զուգահեռ՝ 2025 թվականի մայիսի 26-ին, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (ՏԿԵՆ) կողմից շրջանառության մեջ դրվեց «Վարչատարածքային բաժանման մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքներում փոփոխությունների նախագիծը, որով առաջարկվում էր միավորել Խոյ համայնքը իր 17 բնակավայրերով ու Վաղարշապատ քաղաքը, և այդպիսով ձևավորել Վաղարշապատ խոշորացված համայնքը: Համայնքների միավորման անհրաժեշտությունը հիմնավորվում էր կառավարման արդյունավետության բարձրացման, տնտեսական զարգացման խթանման, սոցիալական համախմբվածության ամրապնդման, մարդկային կապիտալի զարգացման և մասնակցային կառավարման, տարածքային պլանավորման արդյունավետության բարձրացման հրամայականներով: Հուլիսի 3-ին խորհրդարանն ընդունեց համապատասխան օրենքներում փոփոխություններ կատարելու վերաբերյալ որոշումը: Համաձայն օրենսդրության՝ համայնքների վերջնական միավորումը պետք է կայացված համարվեր ավագանու ընտրությունների արդյունքում միավորված համայնքի ավագանու անդամների լիազորությունների ստանձնմամբ:

Համայնքների միավորման վերաբերյալ որոշման նախագծի խորհրդարանական քննարկման ընթացքում ընդդիմադիր պատգամավորները պնդել են, որ բնակիչների շրջանում պատշաճ հանրային լսումներ չեն անցկացվել, իսկ գործընթացը ունեցել է քաղաքական նպատակահարմարություն (նշենք, որ Արգիշտի Մեխակյանը ուներ Խոյ համայնքի գրանցում և առաջին համարի այլ թեկնածուի պարագայում գուցե գրանցվեին այլ արդյունքներ): Նշված պնդումներին ի պատասխան՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանը հայտարարել է, որ հանրային լսումներ տեղի են ունեցել թե՛ Վաղարշապատում, և թե՛ Խոյում: «Փաստերի ստուգման հարթակը» համայնքների առցանց ռեսուրսների մշտադիտարկման արդյունքում հանրային լսումների վերաբերյալ ընդամենը մեկական հաղորդագրություն է գտել:

Մասնակից ուժերի ընտրական ցուցակների վերլուծություն

Վաղարշապատ համայնքի ավագանու ընտրություններին մասնակցության համար գրանցում է ստացել 8 քաղաքական ուժ՝ 7 կուսակցություն և 1 կուսակցությունների դաշինք,

իսկ մեկ կուսակցություն գրանցման գործընթացում ինքնաբացարկ էր ներկայացրել: Մասնակից ուժերը հետևյալն էին՝

- «Հաղթանակ» կուսակցությունների դաշինքը՝ կազմված «Առաջ» և «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցություններից, ցուցակը գլխավորում էր ավագանու անդամ Սևակ Խաչատրյանը,
- «Համահայկական ճակատ» կուսակցություն, ցուցակը գլխավորում էր նախկին զինվորական Արտյոմ Սիմոնյանը,
- «Հանրապետություն» կուսակցություն, ցուցակը գլխավորում էր քաղաքագետ Հարություն Մկրտչյանը,
- «Մայր Հայաստան» ազգային-դեմոկրատական կուսակցություն, ցուցակը գլխավորում էր Դողս բնակավայրի նախկին ղեկավար Գրիշա Հարությունյանը,
- «Ազատ դեմոկրատներ» կուսակցություն, ցուցակը գլխավորում էր գործարար Վահրամ Ազատյանը,
- «Ժառանգություն» կուսակցություն, ցուցակը գլխավորում էր նախկին զինվորական Արկադի Փայտյանը,
- «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն, ցուցակը գլխավորում էր Վաղարշապատ համայնքի ղեկավարի պաշտոնակատար Արգիշտի Մեխակյանը,
- «Հայրենիք» կուսակցություն, ցուցակը գլխավորում էր գրող Խաչիկ Մանուկյանը:

«Ականատես»-ն ուսումնասիրել է Վաղարշապատի ավագանու ընտրությունների մասնակից ուժերի թեկնածուների ցուցակները և վերլուծել դրանց սեռային, տարիքային, կուսակցական և զբաղվածության բաղադրիչները:

Սեռային բաշխվածությունը

Սեռային բաշխվածության բաղադրիչի մասով նկատելի է մի օրինաչափություն, որ բոլոր կուսակցությունները գրեթե բոլոր եռյակ համարներում (1-3; 4-6...) կանանց հատկացրել են երրորդ տեղը: Նաև նկատելի է, որ եռյակներում երկու կին գրեթե չի հանդիպում: Սրանից կարելի է եզրակացնել, որ մասնակից ուժերը կանանց ներգրավվածությունն ապահովելու առումով պարզապես կատարում են ՀՀ ընտրական օրենսգրքի ձևական/ֆորմալ պահանջը:

Զբաղվածությունը

Կուսակցությունների ցուցակներում ներառված թեկնածուների տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թեկնածուները մեծամասամբ չունեն զբաղվածություն: Ամենից «զբաղվածը» «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ցուցակն է, որում, սակայն, թեկնածուները հիմնականում աշխատում են տեղական ինքնակառավարման մարմիններում (ՏԻՄ) կամ դրանց ենթակա կազմակերպություններում: Բարձր զբաղվածության ցուցանիշով հաջորդը «Ազատ դեմոկրատների» ցուցակն է: Մնացած դեպքերում զբաղվածություն չունեցողները ցուցակում ավելի շատ են, քան ունեցողները:

Թեկնածուների կուսակցական պատկանելությունը

Ցուցակներում թեկնածուների կուսակցական պատկանելիությունը ուսումնասիրելիս կարելի է նկատել, որ որոշ դեպքերում մասնակից կուսակցական անդամ չհանդիսացող թեկնածուները մեծապես առաջանցիկ համարներում են, ինչից կարելի է ենթադրել, որ ոչ թե կուսակցություններն են մասնակցում ընտրություններին, այլ դրանք օգտագործվում են որպես հարթակ անհատների կողմից: Այս երևույթը, մասնավորապես, նկատելի է «Ժառանգություն», «Ազատ դեմոկրատներ» և «Հանրապետություն» կուսակցությունների դեպքում:

Տարիքը

Թեկնածուների տարիքային վերլուծությունից կարելի է նկատել, որ միջինում ամենից ավագ ցուցակն ունի «Հաղթանակ» կուսակցությունը, իսկ հետո՝ «Հանրապետություն»-ը: Վերջինս ուշագրավ է նրանով, որ չնայած ցուցակի միջին տարիքի բարձր լինելուն, ամենից երիտասարդ քաղաքապետի թեկնածուն հենց այս ցուցակում է: Իսկ ամենաերիտասարդ ցուցակը «Համահայկական ճակատ»-ինն է:

Համայնքապետի թեկնածուները

Ստորև ներկայացված է նաև մասնակից ուժերի ցուցակները գլխավորող՝ համայնքապետի թեկնածուների տվյալների ամփոփ վերլուծությունը:



Քաղաքական ուժերի նախընտրական ծրագրեր

Համամասնական ընտրակարգի գլխավոր առանձնահատկություններից է մասնակից ուժերի գաղափարական, ծրագրային պայքարը: Ընտրողներին հաճախ հորդորում ենք ծանոթանալ քաղաքական ուժերի նախընտրական ծրագրերին վերջիններիս օրակարգերին ավելի լավ ծանոթանալու և կողմնորոշվելու համար: Թեպետ ՀՀ ընտրական օրենսգիրքը չի պարտադրում մասնակից ուժերին ունենալ նախընտրական ծրագրեր, այդուհանդերձ, դրանց առկայությունը ընտրողների հանդեպ պատասխանատվության և հաշվետվողականության ցուցիչ է:

Վաղարշապատ համայնքի ավագանու ընտրություններում մասնակից 8 ուժերից միայն 4-ն են ներկայացրել գրավոր նախընտրական ծրագրեր՝ «Հաղթանակ» դաշինքը, «Հանրապետություն», «Մայր Հայաստան» և «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունները:

Բարեգործության արգելքի խախտումներ

ՀՀ ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի համաձայն՝ նախընտրական քարոզչության ժամանակ ընտրություններին մասնակցող կուսակցություններին արգելվում է անձամբ կամ նրանց անունից կամ որևէ այլ եղանակով ընտրողներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով տալ (խոստանալ) դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ կամ մատուցել (խոստանալ) ծառայություններ: ՀՀ քրեական օրենսգրքի 221-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում ընտրությունների նշանակման որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը թեկնածուի, կուսակցության անդամի կողմից անձամբ կամ նրանց (այդ թվում՝ կուսակցության) անունից կամ որևէ այլ եղանակով կամ բարեգործության անվան տակ ընտրողներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով դրամ, սննդամթերք, արժեթուղթ, ապրանք տալու կամ բարեգործության հետ միաժամանակ նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն իրականացնելու համար:

Վաղարշապատի ընտրություններում արձանագրվել են բարեգործության արգելքի խախտման դեպքեր:

Առաջին դեպքում, 2025 թ. հոկտեմբերի 21-ին կազմակերպվել է բարեգործական միջոցառում Խոյ համայնքի Դողս գյուղում, որտեղ ընտրություններն անցկացվում էին Վաղարշապատի հետ միավորվելու արդյունքում:

Ըստ համացանցում տարածված տեղեկությունների՝ միջոցառումը կազմակերպվել է բարերար Ռուբեն Մանուկյանի կողմից, որը ՔՊ կուսակցության անդամ, ՏԻՄ ընտրություններում ՔՊ ավագանու ցուցակի երկրորդ համար Լյուդվիկ Յայլոյանի ընկերն է: Միջոցառումն անցկացվել է Վաղարշապատ համայնքի ավագանու ընտրությունների նշանակման որոշումն ուժի մեջ մտնելուց հետո, պաշտոնական քարոզարշավի մեկնարկից մեկ օր առաջ և ներկայացվել է որպես Ռ. Մանուկյանի նախաձեռնությամբ և աջակցությամբ իրականացված համայնքային բարեկարգման աշխատանքների շնորհանդես: Միջոցառման ընթացքում տեղի է ունեցել հյուրասիրություն, համերգ, երեխաներին բաժանվել են նվերներ, իսկ մեկ երեխայի տրամադրվել է 10,000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար: Նվերների բաժանումն իրականացրել է անձամբ Լյուդվիկ Յայլոյանը: Վաղարշապատ համայնքի

ղեկավարի պաշտոնակատար և ՔՊ համայնքապետի թեկնածու Արգիշտի Մեխակյանը նույնպես մասնակցել է բարեգործական միջոցառմանը և ելույթ ունեցել հարթակից: Միջոցառմանը մասնակցել է նաև Արմավիրի մարզպետ Վահրամ Խաչատրյանը:

Այսպիսով, բարեգործական միջոցառումն իրականացվել է Վաղարշապատ համայնքի ավագանու ընտրություններում թեկնածու հանդիսացող և/կամ ընտրությանը մասնակցող կուսակցության անդամներ հանդիսացող անձանց ուղղակի մասնակցությամբ (ընդհուպ նյութական բարիքներն անձամբ բաժանելը): Միևնույն ժամանակ, միջոցառման անցկացումն ակնհայտորեն ասոցացվում է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության և դրա անդամների ու ընտրություններում թեկնածուների անվան հետ, ուստի նրանց գործողություններում առերևույթ առկա են ՀՀ քրեական օրենսգրքի 221-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներ: Դեպքի կապակցությամբ «Ականատես»-ը հաղորդում է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազություն, հարուցվել է վարույթ:

Բարեգործության արգելքի խախտման երկրորդ դեպքը տեղի է ունեցել նոյեմբերի 5-ին: Անուշ Համբարձումյանը, որը հանդիսանում է Վաղարշապատի թիվ 14/27 տեղամասային հանձնաժողովի նախագահը՝ նշանակված ՔՊ կողմից, միևնույն ժամանակ՝ Գեղակերտ գյուղի դպրոցի տնօրենը և «Կանանց, երիտասարդների և կրթության հզորացման» հասարակական կազմակերպության (ՀԿ) նախագահը, համագործակցելով «Կամրջակ» սոցիալ-բարեգործական ՀԿ-ի հետ, իր տան բակից համայնքի բնակիչներին օգնություն է բաժանել: Ա. Համբարձումյանի ֆեյսբուքյան էջում նաև նշված է, որ վերջինս հայտ է ներկայացրել ՔՊ կուսակցությանը՝ ԱԺ ընտրությունների նախընտրական ցուցակում ներգրավվելու ակնկալիքով: Ավելի վաղ «Հետք» լրատվականն անդրադարձել էր, որ Ա. Համբարձումյանն իր էջում ակտիվ քարոզչություն է իրականացնում ՔՊ օգտին:

Թեև նմանատիպ օգնություն «Կամրջակ» ՀԿ-ի կողմից բաժանվել է նաև ՀՀ այլ մարզերում, կուսակցության աջակից/անդամ հանդիսացող անձի կողմից նախընտրական քարոզչության ժամանակահատվածում բարեգործություն կազմակերպելը, նույնիսկ կուսակցության կամ թեկնածուի անունից չկատարվելու և բարեգործության հետ մեկտեղ ուղղակի քարոզչություն չիրականացնելու դեպքում, անկողմնակալ դիտորդի մոտ ողջամիտ ենթադրություն կարող է առաջացնել բարեգործության՝ կուսակցության կամ թեկնածուի հետ փոխկապակցված, նրանց գործունեությանն առնչվող լինելու վերաբերյալ:

Դեպքի հանրայնացումից հետո Անուշ Համբարձումյանին տրվել է տնային կալանք, որի արդյունքում վերջինս զրկվել է նաև տեղամասային հանձնաժողովի կազմում գործելու հնարավորությունից:

Վարչական ռեսուրսի չարաշահում

Վարչական ռեսուրսները մարդկային, ֆինանսական, նյութական, բնեղեն և այլ ոչ նյութական միջոցներն են, որոնց ընտրությունների ժամանակ տիրապետում են հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները՝ պայմանավորված հանրային ոլորտում անձնակազմի, ֆինանսների և հատկացումների նկատմամբ նրանց վերահսկողությամբ, հանրային ենթակառուցվածքների հասանելիությամբ, ինչպես նաև այն ռեսուրսները, որոնք արտահայտվում են նրանց՝ որպես հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային

ծառայողների դիրքից բխող հեղինակության կամ հանրային ներկայության ձևով, և որոնք կարող են վերածվել քաղաքական կամ այլ բնույթի աջակցության:

Վարչական ռեսուրսների չարաշահումը հանրային ծառայողների, ինչպես նաև իշխող կուսակցությունների և թեկնածուների անօրինական վարքագիծն է՝ օգտագործելու իրենց պաշտոնեական դիրքը և կապերը պետական ինստիտուտների հետ ընտրությունների արդյունքի վրա ազդելու նպատակով: Վարչական ռեսուրսների չարաշահումը անհամաչափ և անարդարացի առավելություն է տալիս իշխող կուսակցություններին և թեկնածուներին իրենց մրցակիցների հանդեպ՝ այդպիսով խաթարելով ընտրական գործընթացներում հավասարության սկզբունքը, ինչպես նաև ընտրողի՝ կարծիք ձևավորելու ազատությունը: ՀՀ ընտրական օրենսգրքի 23-րդ հոդվածով ամրագրված են Հայաստանում վարչական ռեսուրսի օգտագործման սահմանափակումներն ու արգելքները:

Վաղարշապատի ընտրություններում արձանագրվել է վարչական ռեսուրսների չարաշահման մի քանի դեպք:

Ակդեցության չարաշահում

ՏԻՄ ընտրություններից մոտ 2 ամիս առաջ ճաշկերույթ է կազմակերպվել ՔՊ բարձրաստիճան պաշտոնյաների և համայնքի գործարարների միջև Վաղարշապատի «Դվին» ռեստորանում: Հանդիպմանը մասնակցել են ՏԿԵ նախարար Դավիթ Խուդաթյանը, Էկոնոմիկայի նախարար Գևորգ Պապոյանը, Ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը, ինչպես նաև Վաղարշապատի համայնքապետի ԺՊ Արգիշտի Մեխակյանը: Հանդիպմանը ներկա գործարարների մի մասը նշել է, որ հրավիրվել են համայնքապետարանի կողմից: Այն հանգամանքը, որ նմանատիպ միջոցառում կազմակերպվել է միայն Վաղարշապատ համայնքում, այն էլ՝ ընտրություններից անմիջապես առաջ, ողջամիտ կասկածներ է հարուցում նախընտրական շրջանում պաշտոնական դիրքի և վարչական ռեսուրսների օգտագործման միջոցով գործարար համայնքի վրա ազդեցության փորձի վերաբերյալ:

Նյութական և ոչ նյութական ռեսուրսների օգտագործում

Վարչական ռեսուրսների չարաշահման մեկ այլ դրվագ է արձանագրվել քարոզարշավի պաշտոնական մեկնարկի օրը՝ հոկտեմբերի 22-ին, երբ համայնքի կոմունալ ծառայության աշխատակիցները համայնքապատկան տեխնիկայի օգտագործմամբ փակցրել են ՔՊ քարոզչանյութերը համայնքի տարածքում:

Հոկտեմբերի 26-ին հեռուստատեսության Առաջին ալիքի եթերում տեղի ունեցած բանավեճի ընթացքում (36:00 - 36:33 րոպեներ) «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության թեկնածու և Վաղարշապատ համայնքի ղեկավարի ԺՊ Արգիշտի Մեխակյանը հայտարարեց, որ վերջին երկու ամսում համայնքը հրատապ ծրագրերով կառավարությունից կես մլրդ-ից ավելի գումար է ստացել: Մեջբերում Ա. Մեխակյանի ելույթից՝ *«Համայնքի համար մեկ ֆինանսավորողը կառավարությունն է: Այս պահին լրացուցիչ միջոցներով, որը համայնքի բյուջեի հետ ընդհանրապես կապ չունի, հրատապ ծրագրերի շրջանակներում վերջին 2 ամսվա ընթացքում 500 միլիոն դրամից ավել ներդրում է կատարվում Էջմիածին քաղաքում՝ մի շարք կարևորագույն փողոցներ ասֆալտապատելով, նաև կոյուղու ցանցը արդիականացնելով»:*

Ընտրություններից ընդամենը 2 ամիս առաջ ՀՀ կառավարության կողմից, քաղաքական նպատակահարմարությամբ պայմանավորված, բյուջետային միջոցների ուղղումը

Վաղարշապատ համայնքին և համապատասխան ոլորտներում ինտենսիվ աշխատանքների նախաձեռնումը չեն կարող այլ կերպ ընկալվել, քան վարչական ռեսուրսի չարաշահում՝ Վաղարշապատի ավագանու ընտրություններում հանրային համակրանքը հօգուտ կառավարող քաղաքական ուժի ուղղելու և վերջինիս համար մրցակցային առավելություն ապահովելու նպատակով:

«Ականատես»-ը պահանջել է ՀՀ կառավարությունից, ՏԿԵՆ-ից և Վաղարշապատի համայնքապետարանից ներկայացնել լրացուցիչ պարզաբանումներ՝ Վաղարշապատ համայնքին կատարված հատկացումների հիմնավորվածության վերաբերյալ: Ի պատասխան՝ ՏԿԵՆ-ը հանդես է եկել հանրային պարզաբանմամբ՝ նշելով, որ նախարարության կողմից հրատապ 1 ծրագրի շրջանակներում կատարվել է ոչ թե 500 մլն, այլ 185 մլն հատկացում Վաղարշապատ համայնքին: Նմանատիպ հատկացումներ, ըստ ՏԿԵՆ-ի, կատարվել են նաև մի շարք այլ մարզերում: Այդուհանդերձ, քանի որ ՏԿԵՆ պարզաբանման և Ա. Մեխակյանի կողմից ներկայացված գումարներն էականորեն տարբերվում են, իսկ համայնքապետարանն այդպես էլ չի արձագանքել պարզաբանում ներկայացնելու դիմումին, պետական լրացուցիչ հատկացումների հարցը Վաղարշապատի ընտրություններում մնում է արդիական:

Հետաքննող լրագրողներն արձանագրել են, որ Արգիշտի Մեխակյանի և «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական քարոզչական նյութերը պարբերաբար հրապարակվել են Խոյ համայնքի բնակավայրերի պաշտոնական ֆեյսբուքյան էջերում: Տեղեկատվական այս հարթակները, որոնք նախատեսված են համայնքային հայտարարությունների և ծառայողական հաղորդագրությունների համար, ըստ հրապարակված դիտարկումների, օգտագործվել են մեկ քաղաքական ուժի և դրա թեկնածուի քարոզչությունը տարածելու նպատակով: Լրագրողների կողմից նկատվելուց հետո հրապարակումները հեռացվել են:

Այս դիտարկումները բարձրացրել են հարցեր վարչական ռեսուրսի հնարավոր օգտագործման վերաբերյալ, մասնավորապես՝ համայնքային սոցիալական էջերի, համայնքապետարաններին ենթակա աշխատակազմերի և պաշտոնական հաղորդակցման հարթակների՝ քաղաքական քարոզչության մեջ ներգրավման մասով:

Նախընտրական ֆինանսավորմանն առնչվող խնդիրներ

Կուսակցությունների հայտարարագրերի և հաշվետվությունների տվյալների անհամապատասխանություն

«Ականատես»-ն ուսումնասիրել է Վաղարշապատի ավագանու ընտրությունների մասնակից կուսակցությունների՝ ընտրություններին նախորդող 1 տարվա գույքի և եկամուտի հայտարարագրերը, որոնք հրապարակվում են ԿԸՀ-ի կողմից, ինչպես նաև կուսակցությունների տարեկան ֆինանսական հաշվետվությունները, որոնք հրապարակվում են ԿԿՀ-ի կողմից:

Ուսումնասիրությունը վեր է հանել մի քանի խնդիրներ՝

- «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցության գույքի և եկամուտների հայտարարագրի «Եկամուտներ» բաժնում բացակայում է պետական ֆինանսավորում ստանալու մասին տեղեկատվությունը: Կուսակցության 2024 թ. տարեկան

ֆինանսական հաշվետվությունում նշված է շուրջ 1 մլն դրամի բնեղենով նվիրատվություն՝ կատարված 2024 թ. դեկտեմբերին, որը նույնպես արտացոլված չէ հայտարարագրում: Եվ ընդհակառակը, հայտարարագրում առկա է շարժական գույք՝ ավտոմեքենա, որը տարեկան հաշվետվության մեջ ներառված չէ: Կարելի է եզրակացնել, որ գույքը կամ 2025 թ.-ին է ձեռք բերվել, կամ տարեկան հաշվետվությունը թերլրացված է եղել: Միևնույն ժամանակ, «Գույքի նկատմամբ իրավունքի» սյունակում որոշ գույքերի դեպքում պատշաճ լրացված չեն իրավունքի տեսակները:

- «Համահայկական ճակատ» կուսակցության գույքի և եկամուտների հայտարարագրի համաձայն՝ կուսակցության կենտրոնական գրասենյակը անհատույց օգտագործման է տրված կուսակցությանը: Սակայն այդ դեպքում տարեկան հաշվետվությունում պետք էր նշել բնեղենով նվիրատվություն ստանալու հանգամանքը, որը բացակայում է, ինչպես նաև հայտարարագրում նշել բնեղենով նվիրատվության չափը:
- «Ազատ դեմոկրատներ» կուսակցության գույքի և եկամուտների հայտարարագրում բնեղենով նվիրատվությունները նշված են, սակայն որպես կուսակցության անշարժ գույքի հասցե նշված է «Ավագ Պետրոսյան փողոց»-ը, ինչը չի համընկնում կենտրոնական գրասենյակի՝ տարեկան հաշվետվության մեջ նշված հասցեի հետ: Սա կարող է նշանակել, որ կամ տարեկան հաշվետվությունն է թերլրացված, կամ գույքը ձեռք է բերվել 2025 թ.-ին:

ՀՀ ընտրական օրենսգրքի վերջին փոփոխությունների համաձայն՝ ԿԸՀ Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության (ՎՎԾ) պարտավորվածությունն է հայտարարագրերը տեղադրել հանձնաժողովի համացանցային կայքում՝ բաց տվյալների ձևաչափով: Օրենքը չի սահմանում բաց տվյալների ձևաչափը, սակայն ԿԸՀ-ն, ինչպես նախորդիվ, շարունակում է հրապարակել հայտարարագրերը ոչ բաց ձևաչափով՝ սքան արված PDF տարբերակներով:

Նախընտրական հիմնադրամների ընթացիկ ֆինանսական թափանցիկության և վերահսկողության խնդիրներ

Ժողովրդավարական ընտրությունների կարևոր նախապայմաններից է քաղաքական ուժերի ֆինանսավորման թափանցիկությունը:

ՀՀ ընտրական օրենսգրքի 2024 թ. փոփոխությունների համաձայն՝ ընտրություններին մասնակցող ուժերի գրանցման ժամկետի ավարտից հետո մինչև քվեարկությանը հաջորդող երրորդ օրը՝ 3 աշխատանքային օրը մեկ, բանկերը տվյալներ են ներկայացնում ԿԿՀ ընտրություններին մասնակցող կուսակցությունների հաշիվների մնացորդի, մուտքերի և ելքերի վերաբերյալ: ԿԿՀ-ն ամփոփում է այդ տվյալները, կազմում տեղեկանք և հրապարակում իր կայքում:

Զուգահեռաբար, ԿԸՀ ՎՎԾ-ն ամփոփում է մասնակից կուսակցությունների և դաշինքների նախընտրական հիմնադրամների ֆինանսական մուտքերի և ելքերի վերաբերյալ տվյալները, կազմում ամփոփ տեղեկանք, որը տեղադրվում է ԿԸՀ համացանցային կայքում:

Այս երկու տեղեկանքների համադրության արդյունքում տեսնում ենք անհամապատասխանություններ՝ կուսակցության հաշվից բանկային հաշվեհամարի ելքերի և հիմնադրամ կատարված մուտքերի միջև: Մինչդեռ նման անհամապատասխանություններ չպետք է լինեին, քանի որ Ընտրական օրենսգրքի վերջին փոփոխությունների համաձայն՝ նախընտրական հիմնադրամներին փոխանցումներ կարող են կատարվել միմիայն կուսակցության բանկային հաշվեհամարներից: Այսպես՝

- Հոկտեմբերի 27-ի դրությամբ, ըստ ԿԿՀ տեղեկանքի, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հաշվեհամարից 10 մլն դրամ ելք է եղել դեպի նախընտրական հիմնադրամի հաշվեհամար, մինչդեռ հիմնադրամի վերաբերյալ ԿԸՀ տեղեկանքում որևէ մուտք կամ ծախս նշված չէ: Այս դեպքը առավել մտահոգիչ է, քանզի հոկտեմբերի 22-ից մեկնարկած քարոզարշավի ընթացքում արձանագրել ենք բազում քարոզչական միջոցառումներ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմից, իսկ Ընտրական օրենսգիրքը պարտավորեցնում է քարոզչական բնույթի ծախսերն իրականացնել միմիայն նախընտրական հիմնադրամի միջոցների հաշվին:
- Հոկտեմբերի 22-ի դրությամբ «Հանրապետություն» կուսակցության բանկային հաշվեհամարի մասին ԿԿՀ տեղեկանքում նշված է 0 դրամի մուտք, 67,705 դրամի ելք և մոտ 4 մլն դրամի մնացորդ, մինչդեռ ԿԸՀ ՎՎԾ տեղեկանքում նշված է 1 մլն դրամի մուտք նախընտրական հիմնադրամում: ԿԿՀ տեղեկանքը հետագայում թարմացվել է և կուսակցության հաշվեհամարից 1 մլն դրամի ելքը լրացվել:
- Հոկտեմբերի 27-ի դրությամբ «Հայրենիք» կուսակցության բանկային հաշվեհամարի մասին ԿԿՀ տեղեկանքում կուսակցության հաշվեհամարից ելքեր չեն գրանցվել, մինչդեռ ԿԸՀ ՎՎԾ տեղեկանքներում նշված է 1 մլն դրամի մուտք նախընտրական հիմնադրամում:
- Հոկտեմբերի 22-ի և 27-ի դրությամբ «Ժառանգություն» կուսակցության բանկային հաշվեհամարի մասին տեղեկանքներում բացակայում են կուսակցության ֆինանսական հոսքերի մասին տվյալները, մինչդեռ ԿԸՀ ՎՎԾ տեղեկանքում առկա են մուտքեր նախընտրական հիմնադրամում:
- Հոկտեմբերի 27-ի դրությամբ «Հաղթանակ» դաշինքի նախընտրական հիմնադրամում, ըստ ԿԸՀ ՎՎԾ տեղեկանքի, մուտք է եղել 16,320,000 դրամ: Դաշինքը կազմված է ՀՅԴ և «Առաջ» կուսակցություններից, հետևաբար միայն այդ կուսակցությունների հաշիվներից կարող են մուծումներ կատարվել դաշինքի նախընտրական հիմնադրամին: Սակայն ԿԿՀ հոկտեմբերի 22-ի և 27-ի տեղեկանքներում ՀՅԴ և «Առաջ» կուսակցություններից ելք է եղել գումարային ընդամենը 13 մլն դրամ:

Տեղեկանքների համադրելիության խնդիրներ

- ԿԿՀ-ն տեղեկանքները ներկայացնում է առանձին եռօրյա հատվածների տրամաբանությամբ: Այս տեղեկանքները հրապարակումից հետո ենթարկվում են ընթացիկ խմբագրումների՝ այդ մասին կատարելով ընդհանուր բնույթի նշում: Հարկ է նշել նաև, որ թեև ԿԿՀ կողմից հրապարակվել են բոլոր տեղեկանքները, դրանք հրապարակվել են ԿԸՀ կողմից սահմանված ժամանակացույցից շեղումով:
- ԿԸՀ ՎՎԾ-ն ներկայացնում է մեկ միասնական տեղեկանք, որում 3 օրը մեկ տվյալները նորացվում են (նախորդ տվյալները չեն պահպանվում), ինչը դժվար է դարձնում այս տեղեկանքների ժամանակային համեմատությունը:

Այս երկու ձևաչափերը էականորեն բարդացնում են լրագրողների, դիտորդական առաքելությունների վերահսկողական գործառույթները՝ տվյալների համապատասխանությունն ու արժանահավատությունը ստուգելու իմաստով: Քաղաքական ֆինանսավորման թափանցիկությունն ապահովելու պարտավորություն ունեցող այս երկու կառույցների չհամակարգված աշխատանքը անհնար է դարձնում ընտրություններում օգտագործվող ֆինանսական հոսքերի արդյունավետ վերահսկողությունը:

Նախընտրական հիմնադրամների ամփոփ վերլուծություն և ՎՎԾ եզրակացություն

Ուսումնասիրվել են մասնակից ուժերի նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերը, ինչպես նաև ՎՎԾ ստուգման եզրակացությունները: Համաձայն օրենսդրության՝ մասնակից ուժերը ընտրությունների ժամանակ երեք անգամ ներկայացրել են հայտարարագրեր, և ՎՎԾ-ն համապատասխանաբար ներկայացրել է ստուգման երեք եզրակացություն: Ստորև աղյուսակում ներկայացված է նախընտրական հիմնադրամ կատարված մուծումների չափը, հիմնադրամից կատարված ծախսերի չափը, ուժի ստացած քվեները և մեկ քվեի հաշվարկով կատարված ծախսը:

Մասնակից ուժ	**Հիմնադրամի մուտք (ՀՀ դրամ)**	**Հիմնադրամի ելք (ՀՀ դրամ)**	**Ստացած քվեների թիվը**	**Մեկ քվեի հաշվարկով ծախսված գումարը (ՀՀ դրամ)**
Հաղթանակ դաշինք	30,550,000	30,549,600	10,051	3,039
Համահայկական ճակատ	637,000	491,638	295	1,666
Հանրապետություն	2,795,017	2,795,017	1,241	2,252
Մայր Հայաստան	12,877,954	12,877,953	1,692	7,611
Ազատ դեմոկրատներ	2,140,000	2,140,000	1,177	1,818
Ժառանգություն	500,000	487,000	440	1,106
Քաղաքացիական պայմանագիր	55,500,000	54,666,389	15,298	3,573
Հայրենիք	4,330,000	4,323,275	1,193	3,623
Ընդհանուր	109,329,971	108,330,872	31,387	**Միջին՝** 3,086

Վերոնշյալ պատկերից առաջին կարևոր դիտարկումը, որ կարելի է անել հետևյալն է. անցողիկ շեմը հաղթահարած և մանդատների բաշխմանը մասնակցած երեք ուժերը նաև առաջին երեքն են նախընտրական հիմնադրամ մուտքերի և ծախսերի ցուցանիշներով:

Առանձին հայտարարագրերի ուսումնասիրության մասով արձանագրվել են հետևյալ խնդիրները. «Ժառանգություն» և «Հայրենիք» կուսակցությունները իրենց նախընտրական հիմնադրամ միջոցներ են ստացել ֆիզիկական անձանցից՝ 500,000 և 1,000,000 ՀՀ դրամ, ինչը թույլատրված չէ գործող իրավակարգավորումներով: Հիմնադրամների հայտարարագրերում և ՎՎԾ եզրակացության մեջ նշված է, որ այդ գումարները հետ են վերադարձվել նվիրատուներին: Պետք է նշել, որ ՎՎԾ երեք եզրակացություններում այլ խնդիրներ արտացոլված չեն, այսինքն՝ նախընտրական ծախսերը վերահսկող կառույցը հայտարարագրերում խախտումներ չի հայտնաբերել:

Դիտորդական առաքելությունը պաշտոնական հարցում էր հղել ԿԸՀ ՎՎԾ-ին՝ համացանցում տեղադրված երկու վճարովի քաղաքական գովազդների հետ կապված: Հարցումների

նպատակն էր հասկանալ, թե արդյոք այս դեպքերը նկատվել են ՎՎԾ-ի կողմից և արդյոք գովազդային ծախսերը արտացոլված են որևէ հիմնադրամի հայտարարագրում:

Առաջին դեպքում «azatakanparty.am» էջը Meta հարթակում իրականացնում էր քարոզչություն՝ վճարովի քաղաքական գովազդի ձևով: Գովազդում երևում են «Հայրենիք» կուսակցության ընտրական ցուցակի առաջին համարը և Ազատական կուսակցության ներկայացուցիչը: Հատկանշական է, որ կուսակցությունը չէր մասնակցում Վաղարշապատի ընտրություններին, սակայն կուսակցության ներկայացուցիչը հայտարարել էր Վաղարշապատի ավագանու ընտրություններում «Հայրենիք» կուսակցության հետ համագործակցության մասին: Ի պատասխան «Ականատես»-ի հարցմանը՝ ՎՎԾ-ն նշում է, որ գովազդը նկատել են, սակայն այն Meta-ի կողմից արդեն հեռացվել է: Գովազդի ծախսը որևէ նախընտրական հիմնադրամի հայտարարագրում ներկայացված լինելու հարցին ՎՎԾ-ն չի անդրադարձել:

Երկրորդ դեպքը վերաբերում է «Armenian News» էջին, որը Meta հարթակում իրականացրել է վճարովի քարոզչություն՝ ծախսելով շուրջ 2,300 ԱՄՆ դոլար: Հարցին, թե արդյոք որևէ մասնակից ուժի հիմնադրամի ծախսերում այս գովազդն արտացոլված է՝ ՎՎԾ-ն պատասխանել է, որ «Armenian News» էջի համացանցում առկա նույնականացման տվյալները կուղարկվեն ԿԸՀ իրավասու մարմիններին ուղարկելու համար:

«Ականատես»-ը նաև հարցում է արել ՎՎԾ-ին՝ պարզելու, թե արդյոք հայտարարագրերում շուկայական արժեքով արտացոլված նվիրատվությունները հաշվարկվում են հիմնադրամների համար օրենսդրությամբ նախատեսված ծախսերի սահմանաչափի շրջանակում: Այս հարցին ՎՎԾ-ն առհասարակ չի անդրադարձել:

Բնեղենով նվիրատվություններ, որոնք իրենց շուկայական արժեքով արտացոլված են նախընտրական հիմնադրամների հայտարարագրերում, կարելի է գտնել ընտրություններին մասնակից մի քանի քաղաքական ուժերի մոտ: ՀՀ ընտրական օրենսգրքի 26-րդ հոդվածի երրորդ կետի համաձայն՝ նախընտրական հիմնադրամը ձևավորվում է այդ կուսակցության (դաշինքի անդամ կուսակցությունների) կատարած մուծումներից: ՀՀ ընտրական օրենսգրքի 27-րդ հոդվածի առաջին կետի համաձայն՝ մասնակից ուժերը նախընտրական քարոզչության նախապատրաստման, կազմակերպման և իրականացման հետ կապված ծախսերն իրականացնում են նախընտրական հիմնադրամի միջոցների հաշվին: Սրանից ելնելով՝ պետք է նշել, որ առկա է որոշակի հակասություն ընտրական օրենսդրությունում, ինչպես նաև ԿԸՀ նախընտրական հիմնադրամներ կատարվող մուծումների և հիմնադրամներից կատարվող ծախսերի հաշվառման կարգը, նախընտրական հիմնադրամ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրի ձևը սահմանելու մասին որոշման մեջ: Վերջինիս մեջ հետևյալ կարգավորումից՝ ««հիմնադրամից կատարված բոլոր ծախսերի ընդհանուր չափը» տողում նշվում է «Հիմնադրամից կատարված ծախսի փաստացի չափը 6» սյունակի «Ընդամենը» տողի և «Հիմնադրամի միջոցներից կատարված և հայտարարագրման ոչ ենթակա ծախսերի ընդհանուր չափը» տողի թվերի գումարը», բխում է, որ շուկայական արժեքով մատուցված ապրանքներն ու ծառայությունները չեն արտացոլվում բոլոր ծախսերի ընդհանուր չափում:

Կողմնակալ դիտորդական առաքելություններ

ԿԸՀ-ը հավատարմագրել է մի շարք դիտորդական առաքելությունների, որոնցից ոչ բոլորն են պահպանել դիտորդական չեզոքության՝ օրենքով նախատեսված սկզբունքը: Դրանց շարքում են, մասնավորապես, «Հայաքվե» դիտորդական առաքելությունը (ներառել է «Արարատյան սերունդ» և «Երիտասարդական ակումբների դաշնություն» հասարակական կազմակերպություններին), որը գրանցել է Վաղարշապատի ընտրություններում ամենաշատ թվով՝ 123 դիտորդների, «Պառլամենտարիզմի զարգացման միջազգային կենտրոն» հասարակական կազմակերպությունը՝ 52 դիտորդներով և «Իրավունքի և արդարության կենտրոն Թաթոյան» հիմնադրամը՝ 10 դիտորդներով: Միասին այս դիտորդական խմբերը գրանցել են 185 դիտորդ, շուրջ 4 անգամ ավելի, քանի մնացած դիտորդական առաքելությունները միասին:

Արձանագրվել է, որ այս դիտորդական առաքելությունները հավատարմագրումից հետո չեն պահպանել քաղաքական չեզոքության սկզբունքը և նախընտրական ժամանակահատվածում իրականացրել են ակտիվ քարոզչություն: Օրինակ, «Հայաքվե»-ի դեպքում քարոզչական բնույթի հաղորդագրությունները և տեսանյութերը տարածվել են «Հայաքվե» նախաձեռնության սոցիալական մեդիա հարթակներում (Facebook, Telegram), որոնք ունեն մեծ լսարան:

Այս դիտորդական առաքելությունները խախտել են ՀՀ ընտրական օրենսգրքի 30-րդ հոդվածի պահանջները, որոնց համաձայն՝ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելության իրավունք ունեն ՀՀ այն հասարակական կազմակերպությունները, որոնք չեն աջակցում թեկնածուներին կամ ընտրություններին մասնակցող կուսակցություններին: Ընտրական օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ կետը պարտավորեցնում է դիտորդներին լինել անկողմնակալ, չեզոք, հրապարակայնորեն որևէ կանխակալ դիրքորոշում չարտահայտել կամ նախապատվելի վերաբերմունք չդրսևորել իշխանության կամ ընդդիմության, թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների հետ կապված որևէ հարցի նկատմամբ: Ընտրական օրենսգրքի 23-րդ հոդվածն արգելում է նախընտրական քարոզչության կազմակերպումն ու իրականացումը դիտորդական առաքելություն իրականացնելու համար հավատարմագրված կազմակերպություններին և դիտորդներին:

Ստորև ներկայացված են որոշ հղումներ, որոնք փաստում են քաղաքական անկողմնակալության սկզբունքի անտեսումը, մասնավորապես՝ «Հայաքվե» դիտորդական առաքելության կողմից:

- Վարչախումբը գեբեյյան ստեր է տարածում և արհեստական աղմուկ ստեղծում. դիտորդ Արմեն Մանվելյան
- Այս իշխանությունը բանտում է հայտնվելու, այլ տարբերակ չկա. դիտորդ Ցոյակ Ակոպյան
- Իրավապահնե՛ր, ապօրինի հրամաններ մի՛ կատարեք, դատվելու՛ եք. դիտորդ Ավետիք Չալաբյան.
- Մարդիկ պետք է գնան ընտրատեղամասեր, որ իշխանություն փոխվի. դիտորդ Արմեն Մանվելյան
- Հայոց եկեղեցին փորձում են բնաջնջել միայն մեր թշնամիները և մեկ էլ Փաշինյանը. դիտորդ Արմեն Մանվելյան

- Նիկոլիզմն ուղղակի բացեց ազգային ինքնության տիղմի սողանցքը. դիտորդ Արմեն Սավգուլյան
- Փաշինյանը գործում է Ալիևի թելադրանքով. նախաձեռնության ներկայացուցիչ Հովհաննես Իշխանյան
- Ինչպես Փաշինյանը, այնպես էլ Ստեփան Ասատրյանը՝ նախկին Տեր Արամը, դավաճաններ են. նախաձեռնության ներկայացուցիչ Հովհաննես Իշխանյան

«Ականատես» և «Անկախ դիտորդ» դիտորդական առաքելությունները դիմել են ԿԸՀ՝ պահանջելով ուսումնասիրել դիտորդական առաքելությունների վարքագիծը և իրականացնել ՀՀ ընտրական օրենսգրքով ԿԸՀ-ին վերապահված գործառույթները՝ ընտրական գործընթացների օրինականությունը ապահովելու հարցում: ԿԸՀ-ն մերժել է ներկայացված դիմումներով վարույթների հարուցումը, սակայն դեպքի առթիվ այդուհանդերձ հարուցել է վարույթ՝ սեփական նախաձեռնությամբ: Վարույթի քննությամբ որոշվել է, որ նշված դիտորդական առաքելությունները «ձեռնարկել են պատշաճ միջոցներ՝ հնարավոր խախտումները կանխելու ուղղությամբ», արդյունքում՝ վարույթը կարճվել է:

ԿԸՀ նման արձագանքը մեծ վնաս է հասցնում ընտրություններում դիտորդի՝ որպես անաչառ արբիտրի դերին ու հեղինակությանը, և սահմանափակում ընտրողների՝ ընտրությունների իրական որակի մասին անաչառ կարծիք լսելու հնարավորությունը:

Ատելության խոսք

Ատելության խոսույթը հասարակական կյանքում ուղղորդված խոսքի ձև է, որը խաթարում է հավասարության և արժանապատվության սկզբունքները՝ թիրախավորելով անհատներին կամ խմբերին և նվազեցնելով նրանց դիրքը հասարակական հարաբերություններում: Այն կարող է նպաստել թշնամանքի, անհանդուրժողականության կամ պառակտման խորացմանը և պարունակում է ռիսկեր՝ չարամիտ վերաբերմունք կամ ֆիզիկական/հոգեբանական վնաս պատճառելու հրահրման առումով, այդ թվում՝ քաղաքական հայացքների հիմքով:

ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածը սահմանում է քրեական պատասխանատվություն ատելություն, խտրականություն կամ անհանդուրժողականություն քարոզելու, ինչպես նաև նման նպատակով նյութեր տարածելու համար:

Նախընտրական շրջանում դիտորդական առաքելությունը արձանագրել է մի շարք դրվագներ, որոնք պարունակում են ատելության խոսքի, վիրավորանքի, պիտակավորման կամ թշնամանքի հրահրման տարրեր: Այդ դրվագները նկատվել են ինչպես թեկնածուների և քաղաքական ուժերի հրապարակային ելույթներում, այնպես էլ նրանց կողմնակիցների և առնչակից տեղեկատվական հարթակների հրապարակումներում:

Ատելության խոսույթի տարածումը դիտարկվել է նաև սոցիալական մեդիայի վճարովի գովազդների, կուսակցական էջերի և քարոզչական հարթակների միջոցով, որոնք որոշ դեպքերում լայնորեն տարածել են բևեռացնող և պառակտող հաղորդագրություններ:

Քանի որ արձանագրված դեպքերը բազմազան են և մեծ քանակով, դրանց ամբողջական թվարկումը հնարավոր չէ: Ստորև ներկայացվում են մի քանի բնութագրական օրինակներ, որոնք հրապարակված տվյալների, դիտորդների արձանագրումների հիման վրա ցույց են տալիս ատելության կամ անհանդուրժողականության խոսքի դրսևորումները:

- Արգիշտի Մեխակյա՛ն, դու Նիկոյին քո վրայից չես... - Արեգնազ Մանուկյան
- «Գո՞րծ եք կարում. Նիկո՛յ, զիգանսկի տաբրդ հավաքի ջիանդամվի մեր երկրից». պահեստազորի փոխգնդապետ

Քարոզչության կանոնների խախտումներ

Հանձնաժողովի անդամների քաղաքական չեզոքության սկզբունքի խախտում

Հետաքննող լրագրողները նկատել են, որ Վաղարշապատ համայնքում ձևավորված մի շարք տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամներ սոցիալական ցանցերում տարածում են քարոզչական հայտարարություններ և թեկնածուների լուսանկարներ՝ խախտելով օրենքով սահմանված արգելքները: ՀՀ ընտրական օրենսգրքի 23-րդ հոդվածը հստակ սահմանում է, որ ընտրական հանձնաժողովների անդամներին արգելվում է որևէ ձևով մասնակցել քարոզչությանը: Վերջիններս պարտավոր են գործել անկախ՝ առանց իրենց նշանակած կուսակցության ազդեցության: Հարկ է նկատել, որ քարոզչություն իրականացնող հանձնաժողովների անդամներից ոմանք համայնքապետարանների աշխատակիցներ են, ինչը առաջացնում է վարչական ռեսուրսի չարաշահման լրացուցիչ ռիսկեր: Նշված հանգամանքների բացահայտումից և ԿԸՀ-ին տեղեկացնելուց հետո հանձնաժողովի անդամների մեծ մասը հեռացրել է քարոզչական նյութերն իրենց սոցիալական էջերից:

Քարոզչանյութերի տարածում

Նախընտրական քարոզարշավի առաջին օրն իսկ Վաղարշապատում նկատվել են քարոզչանյութերի տարածման կանոնների բազմաթիվ խախտումներ: Դիտորդների կողմից արձանագրվել է, որ «Քաղաքացիական պայմանագիր» և «Հանրապետություն» կուսակցությունների քարոզչական նյութերը՝

- փակցվում են չսահմանված կամ արգելված վայրերում՝ բազմաբնակարան շենքերի ու հասարակական տարածքների արտաքին պատերին,
- չեն պարունակում օրենքով պահանջվող մակնշում՝ տեղեկատվություն տպաքանակի, տպարանի, պատվիրատուի վերաբերյալ,
- գերկենտրոնացած են մեկ, հաճախ առավել տեսանելի վայրում և ծածկում են ամբողջական փողոցներ, ինչը կարող է խնդրահարույց լինել հաշվի առնելով գովազդային վահանակներ տնօրինող կազմակերպությունների պարտականությունները ոչ խտրական և ոչ կողմնակալ պայմաններ ապահովելու հարցում: Օրինակ՝ Զվարթնոց թաղամասում՝ Վաղարշապատից դեպի Երևան մայրուղու սկզբնական հատվածում, բոլոր գովազդային վահանակները զբաղվեցված են եղել ՔՊ քարոզչական վահանակներով:

Օրենքի դրույթների խախտմամբ փակցված քարոզչանյութերը պետք է հեռացվեն համայնքի ղեկավարի կողմից, անհրաժեշտության դեպքում՝ ոստիկանության աջակցությամբ: Դիտորդները նկատել են, որ միայն առաջին դեպքում նկարագրված խախտումներով փակցված քարոզչանյութերի մի մասն է հեռացվել քարոզարշավի ընթացքում:

Քարոզչության խոչընդոտման դեպք

Նախընտրական քարոզարշավի ընթացքում արձանագրվել է քարոզչական գործունեությունը խոչընդոտելու դեպք, որի կապակցությամբ հարուցվել է քրեական

վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 211-րդ հոդվածի հատկանիշներով (քարոզչություն կատարելուն հարկադրելը կամ քարոզչություն կատարելուն խոչընդոտելը):

Վարույթի հիմքում ընկած է «Հանրապետություն» կուսակցության համայնքապետի թեկնածու Հարություն Մկրտչյանի հաղորդումը, ըստ որի՝ 2025 թ. նոյեմբերի 1-ին՝ ժամը 16:10-ի սահմաններում, իր նախընտրական թիմի աշխատանքներին խոչընդոտել են երկու անձինք: Քննչական մարմինը ձերբակալել է վերջիններիս՝ Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսի եղբորը և եղբորորդուն, որոնց նկատմամբ հետագայում դատարանի որոշմամբ կիրառվել է կալանք՝ համապատասխանաբար 2 և 3 ամսով:

«Լռության օրվա» խախտում

ՀՀ ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի համաձայն՝ քվեարկության և դրան նախորդող օրը քարոզչությունը հրապարակային ելույթների, հրապարակային միջոցառումների միջոցով, զանգվածային լրատվության միջոցներով (ԶԼՄ), այդ թվում՝ կաբելային (մալուխային) ցանցով, արբանյակային կապով և վերգետնյա եթերային հեռարձակմամբ տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից, ինչպես նաև համացանցում գովազդի միջոցով արգելվում է: Արձանագրվել են «լռության օրվա» խախտման բազմաթիվ դեպքեր առցանց տիրույթում մասնակից ուժերի մեծ մասի և որոշների հետ փոխկապակցված ԶԼՄ-ների կողմից: Չնայած լռության օրերին (քվեարկության և դրա նախորդող օր) քարոզչություն և հակաքարոզչություն իրականացնելու համար օրենսդրությամբ նախատեսված վարչական պատասխանատվության՝ լիազոր մարմինների կողմից դրա կիրառմանն ուղղված ջանքեր՝ որևէ քաղաքական ուժի կամ անհատի հանդեպ չեն արձանագրվել:

Քվեարկության օր

«Ականատես» դիտորդական առաքելությունը հետևել է Վաղարշապատի ավագանու ընտրությունների քվեարկության գործընթացին՝ առավոտյան 08:00-ից մինչև քվեարկության արդյունքների հաշվարկի ավարտը: Առաքելության 10 դիտորդներն ընդգրկված են եղել շրջիկ խմբերում և այցելել են Վաղարշապատ համայնքի բոլոր 47 ընտրատեղամասերը: Դիտարկվել են նաև թիվ 14 Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի (ԸԸՀ) աշխատանքները՝ ժամը 19:00-ից սկսած: Դիտորդները հետևել են նաև կուսակցությունների և դաշինքների շտաբների ու գրասենյակների, տեղամասերին հարող տարածքների ընդհանուր միջավայրին և իրադարձություններին:

Ընդհանուր առմամբ, քվեարկությունն անցել է խաղաղ մթնոլորտում, առանց համակարգային խնդիրների կամ լուրջ միջադեպերի:

Դիտորդները տարբեր ընտրատեղամասերում արձանագրել են հետևյալ խնդիրները.

Քվեարկության ընթացք

Ժամը 08:00-20:00 ընկած ժամանակահատվածում արձանագրվել են մոտ 50 խնդիրներ:

1. *Դիտորդի աշխատանքի խոչընդոտում*

- 14/01 ընտրատեղամասում հանձնաժողովի նախագահը փորձել է խոչընդոտել դիտորդի ազատ տեղաշարժը՝ հրահանգելով նրան գտնվել միայն տեսախցիկի նկարահանման դաշտում:

2. *Ընտրողների քվեարկության իրավունքի խոչընդոտում*

- 14/20 ընտրատեղամասում ընտրողը քվեաթերթիկը չիմացությամբ դրել է ոչ թե ծրարի մեջ, այլ դրա տակ, որից հետո հանձնաժողովի անդամը փակցրել է ինքնասոսնձվող դրոշմանիշը ծրարի տակ գտնվող քվեաթերթիկի վրա: Հանձնաժողովը խնդիրը քննարկելուց հետո մարել է քվեաթերթիկը ծրարով հանդերձ և դրանք գցել քվեատուփի մեջ (ինչը ևս ընթացակարգային սխալ է)՝ առանց ընտրողին կրկին քվեարկելու հնարավորություն տալու:
- 14/46 ընտրատեղամասում ժամը 11:00-ին տեղի է ունեցել բաց քվեարկության դեպք. մասնավորապես, անձը մինչև քվեախցիկ մտնելը քվեաթերթիկը դրել է ծրարի մեջ: Միջադեպին ականատես է եղել միայն «Մայր Հայաստան» կուսակցության վստահված անձը, և այդ կապակցությամբ վեճ է ծագել ընտրողի և վստահված անձի միջև: Ընտրողը պատճառաբանել է, որ քվեաթերթիկը ծրարի մեջ է դրել մինչև քվեախցիկ մոտենալը, քանի որ քվեախցիկում դեռ ընտրող է եղել և ցանկացել է շուտ կատարել քվեարկությունը: Հանձնաժողովի նախագահը ԿԸՀ ցուցումով վերցրել է անձի ծրարը և թույլ չի տվել նրան կրկին քվեարկելու: Ընտրողը հեռացել է տեղամասից՝ քվեարկությունն ավարտին հասցնելու հնարավորություն չունենալով:

3. *Քվեարկության բացահայտում*

- 14/20 ընտրատեղամասում մինչև քվեարկություն կատարելը ընտրողը բարձրաձայնել է, թե ում օգտին է պատրաստվում քվեարկել:

4. *Ուղղորդման ռիսկեր*

- 14/20 տեղամասում «Հայրենիք» կուսակցության վստահված անձը, որը տվյալ դպրոցի նախկին տնօրենն էր, հաճախ շփվել ու զրուցել է ընտրատեղամաս մտնող և հեռացող ընտրողների հետ:
- 14/25 տեղամասում «Քաղաքացիական պայմանագրի» կուսակցության վստահված անձը ակտիվորեն շփվել է ներս մտնող և հեռացող ընտրողների հետ, ուղեկցել նրանց դեպի քվեարկության սենյակ կամ դրանից դուրս, պարբերաբար երկար զրուցել նրանց հետ տեղամասի մուտքի մոտ:

5. *Կողմնակի անձանց ներկայություն*

- 14/01 տեղամասում ներկա են գտնվել կողմնակի անձինք, որոնք դիտորդի նկատառումից հետո հեռացվել են տեղամասից:

6. *Մարդկանց և մեքենաների կուտակումներ*

- Մարդկանց և մեքենաների կուտակումներ են արձանագրվել տեղամասերի մուտքի մոտ կամ 50 մետր շառավղով տարածքում՝ 14/01, 14/08, 14/45, 14/46, 14/47 տեղամասերում:
- Մարդկանց կուտակումներ են արձանագրվել 14/08 և 14/46 տեղամասերի ներսում:

7. Քվեատուփերի հետ կապված խնդիրներ

- 14/05 ընտրատեղամասում քվեատուփի հատուկ պլաստիկ կապիչներից մեկը վնասված է եղել:
- 14/02 և 14/29 ընտրատեղամասերում այդ փակիչներն ընդհանրապես բացակայել են և քվեատուփը փակված է եղել միայն ինքնակպչուն թղթյա կնիքներով:

8. Ընտրատեղամասերի մատչելիության և կահավորման խնդիրներ

- Մատչելիության խնդիրներ են արձանագրվել հետևյալ ընտրատեղամասերում՝ 14/01, 14/02, 14/04, 14/05, 14/06, 14/08, 14/11, 14/14, 14/18, 14/19, 14/20, 14/22, 14/24, 14/26, 14/28, 14/29, 14/30, 14/32, 14/42, 14/47:
- Կահավորման խնդիրներ են հայտնաբերվել հետևյալ ընտրատեղամասերում՝ 14/01, 14/05, 14/11, 14/20, 14/31, 14/35, 14/45, 14/46, 14/47:

9. Հանձնաժողովի անդամների անաչառություն

- 14/17 ընտրատեղամասում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կողմից նշանակված հանձնաժողովի նախագահը խոսել է նույն կուսակցության վստահված անձի տրամադրած հեռախոսով անհայտ անձի հետ: Նախագահը հրաժարվել է դիտորդին տեղեկացնել, թե ինչի մասին է զրուցել հեռախոսով: Երևույթը խնդրահարույց է, մասնավորապես՝ հանձնաժողովի նախագահի անաչառության սկզբունքի պահպանման տեսանկյունից:

10. Այլ խնդիրներ

- 14/10 ընտրատեղամասի ընտրական ցուցակում ընտրողի անվան դիմաց եղել է այլ անձի ստորագրություն:
- 14/8 և 14/13 տեղամասերում հոսանքազրկման հետևանքով որոշ ժամանակով դադարեցվել է քվեարկության ընթացքը մինչև լուսավորության վերականգնումը:

Կարևոր է նշել, որ նկարագրված խնդիրների մեծամասնության դեպքում հանձնաժողովի անդամները համագործակցել են դիտորդների հետ և փորձել շտկել խնդիրները: Նշված խնդիրների մասին դիտորդների կողմից գրառումներ են կատարվել ընտրատեղամասերի գրանցամատյաններում:

Արդյունքների ամփոփում

Արդյունքների հաշվարկի և ամփոփման փուլում՝ ժամը 20:00-ից հետո, արձանագրվել են հետևյալ խնդիրները.

- 14/28 և 14/46 ընտրատեղամասերում ոստիկանության ծառայողները ընտրական հանձնաժողովից պահանջել են ներկայացնել քվեարկության արդյունքները և դրանք զեկուցել անհայտ անձանց: Ոստիկանները նաև պահանջել և ստացել են քվեարկության արդյունքներն ամփոփող արձանագրության քաղվածքը, ինչը ևս օրենքով չի նախատեսվում:
- 14/46 ընտրատեղամասում «Հայաքվե» դիտորդական առաքելության դիտորդները պարբերաբար միջամտել են հանձնաժողովի աշխատանքներին, նաև հայտարարություններ արել մասնակից ուժերից մեկի դեմ՝ խախտելով դիտորդական չեզոքությունն ու չմիջամտելու պարտավորությունը:

- Թիվ 14 Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում արձանագրվել է երեք դեպք (14/4, 14/14, 14/19 տեղամասեր), երբ ԸԸՀ ներկայացված ընտրական պարկը ստորագրված/կնքված չի եղել տեղամասային հանձնաժողովի նախագահի կողմից:

Քվեարկության արդյունքներ և մանդատների բաշխում

Վաղարշապատ համայնքի ավագանու ընտրություններում ընտրողների վերաբերյալ հրապարակվել են տարբեր թվային տվյալներ:

Համաձայն ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից ԿԸՀ-ին ներկայացված հոկտեմբերի 3-ի տեղեկանքի՝ Վաղարշապատ և Խոյ համայնքների միավորման արդյունքում ձևավորված Վաղարշապատ խոշորացված համայնքի ընտրողների թիվը կազմում էր 70,022 մարդ: Սակայն, արդեն վերջին՝ նոյեմբերի 7-ի տեղեկանքում, ընտրողների թիվը նշված է 69,866: Պետք է ընդգծել նաև, որ ԿԸՀ կայքի՝ քվեարկության արդյունքների ամփոփման բաժնում, ընտրողների ընդհանուր թիվը նշված է 69,924:

Համաձայն ընտրական օրենսգրքի 104.1-րդ հոդվածի՝ 70,001-ից մինչև 300,000 ընտրող ունեցող համայնքում ավագանու անդամների թիվը պետք է լինի 33, իսկ 25,001-ից 70,000 ընտրող ունեցող համայնքի դեպքում ավագանու անդամների թիվը պետք է լինի 27:

Քվեարկությանը մասնակցել է 31,535 անձ, ինչի արդյունքում ընտրություններում մասնակցության ցուցանիշը կազմում է շուրջ 45 %: Ստորև աղյուսակում ներկայացված են քվեարկության արդյունքում ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի ստացած ձայների թիվը և համապատասխան տոկոսները:

Մասնակից ուժ	Ստացած քվեների թիվը	Ստացած քվեների տոկոսը
Հաղթանակ դաշինք	**10,051**	**32.04 %**
Համահայկական ճակատ	295	0.94 %
Հանրապետություն	1,241	3.96 %
Մայր Հայաստան	**1,692**	**5.34 %**
Ազատ դեմոկրատներ	1,177	3.75 %
Ժառանգություն	440	1.40 %
Քաղաքացիական պայմանագիր	**15,298**	**48.73 %**
Հայրենիք	1,193	3.8 %

ՀՀ ընտրական օրենսգրքով տեղական ինքնակառավարման մարմինների համամասնական կարգով կազմակերպվող ընտրությունների համար սահմանված է 4 % անցողիկ շեմ կուսակցությունների և 6 % շեմ՝ դաշինքների համար: Վաղարշապատ համայնքում ընտրությունների արդյունքում նշված շեմերը կարողացել են հաղթահարել «Քաղաքացիական պայմանագիր»-ը (48.73 %), «Հաղթանակ» դաշինքը (32.04 %) և «Մայր Հայաստան»-ը (5.34 %): Ավագանու մանդատները, համաձայն ԸԸՀ որոշման, բաշխվել են համապատասխանաբար 19, 12 և 2 համամասնությամբ: Քանզի «Քաղաքացիական

պայմանագիր»-ը ստացել է ավագանու անդամների տեղերի 50 տոկոսից ավելին, ապա ցուցակի առաջին համար Արգիշտի Մեխակյանն օրենքի ուժով համարվում է ընտրված համայնքի ղեկավար:

Սակայն կարևոր է հասկանալ թե ինչ հիմքով է որոշվել, որ ավագանու անդամների թիվը 33 է, այլ ոչ թե՝ 27: ՀՀ ընտրական օրենսգրքի 104.1 հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ ընտրողների թիվը յուրաքանչյուր համայնքի համար հաշվարկվում է՝ հիմք ընդունելով օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան տրամադրված տեղեկանքում նշված ընտրողների թիվը: Ընտրական օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լիազոր մարմինը ՏԻՄ ընտրություններում համապատասխան ԿԸՀ-ին տրամադրում է չորս տեղեկանք՝ ընտրողների թվի վերաբերյալ, ընտրություն նշանակվելուց հետո՝ հնգօրյա ժամկետում, ընտրական տեղամասերը կազմավորելուց հետո՝ երկօրյա ժամկետում, ինչպես նաև քվեարկության օրվանից 15 օր և 8 օր առաջ: Վերջին և, հետևաբար, առավել թարմ տվյալներով տեղեկանքի հաշվարկով պետք է ավագանու անդամների թիվը լիներ 27: Հասկանալի չէ, թե ինչ հիմնավորմամբ և տրամաբանությամբ է որոշվել առաջնորդվել այն տեղեկանքով, որի արդյունքում ավագանու մանդատների թիվը կազմել է 33:

Այլընտրանքային՝ 27 հոգանոց ավագանու դեպքում, մանդատները կբաշխվեին համապատասխանաբար՝ 15, 10 և 2: Ստորև աղյուսակում ներկայացված է երկու մոտեցումների համադրությունը, ինչից կարող ենք արձանագրել, որ ընտրված մոտեցումից շահել է առավել շատ մանդատ ստացած ուժը՝ «Քաղաքացիական պայմանագիր»-ը:

Մասնակից ուժ	**Մանդատները՝ 33 հոգանոց ավագանու կազմի դեպքում**		**Մանդատները՝ 27 հոգանոց ավագանու կազմի դեպքում**	
	Մանդատների թիվ	Մանդատների տոկոս	Մանդատների թիվ	Մանդատների տոկոս
Քաղաքացիական պայմանագիր	19	57.58 %	15	55.56 %
Հաղթանակ դաշինք	12	36.36 %	10	37.04 %
Մայր Հայաստան	2	6.06 %	2	7.41 %

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վաղարշապատի ընտրությունների դիտարկման արդյունքում վերհանված խնդիրների հիման վրա ստորև ներկայացվում են առաջարկներ, որոնք միտված են բարելավելու ՀՀ ընտրական օրենսդրությունն ու պրակտիկան, որոնք խոչընդոտում են ազատ, արդար և թափանցիկ ընտրությունների անցկացմանը Հայաստանի Հանրապետությունում:

Ընտրական հանձնաժողովներ

1. Կատարելագործել ՏԸՀ անդամների ներգրավման և ընտրության չափանիշները, գործընթացը առավել գիտակ և պրոֆեսիոնալ կադրերի ներգրավելու նպատակով:

2. Խստացնել ԸԸՀ և ՏԸՀ անդամների վերապատրաստման գործընթացները և մեթոդաբանությունը՝ այդ թվում ներառելով քվեարկության գործընթացի, ընտրախախտումների ու կոնֆլիկտների նմանակման (սիմուլյացիոն) իրավիճակներ, ընտրությունների արդյունքների ամփոփման առաջադրանքներ և այլն:

3. ԸԸՀ և ՏԸՀ անդամների համար նախատեսել վարքագծի կանոններ, որոնք, ի թիվս այլ հարցերի, կկանխարգելեն շահերի բախման իրավիճակները:

4. Միջոցներ ձեռնարկել ԿԸՀ և ԸԸՀ-ների կողմից լիարժեքորեն իրականացնելու ընտրությունների, այդ թվում՝ նախընտրական քարոզչության պահանջների պահպանման և վարչական ռեսուրսի օգտագործման օրինականության նկատմամբ վերահսկողության պարտականությունը:

5. Մշակել մանրամասն ընթացակարգեր և ուղեցույցներ՝ օժանդակելու ինչպես ԿԸՀ, այնպես էլ ԸԸՀ-ների կողմից նախընտրական քարոզչության նկատմամբ առավել արդյունավետ և նախաձեռնողական հիմունքներով վերահսկողության իրականացմանը՝ այդ թվում նախատեսելով ԶԼՄ-ներով, սոցիալական ցանցերով և այլ միջոցներով տարածվող տեղեկատվության մոնիտորինգի, քարոզչանյութերի (այդ թվում՝ ասոցացվող) և քարոզչական միջոցառումների նկատմամբ հսկողության, ընտրատեղամասերի կահավորման համապատասխանության ստուգման (այդ թվում՝ պարբերական դաշտային դիտարկումների իրականացման եղանակով), ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների առանձին գործողություններն ու ծախսերը՝ որպես նախընտրական քարոզչություն որակելու գործիքակազմ:

6. Ձեռնարկել քայլեր ԿԸՀ կայքում առավելագույնս ապահովելու տեղեկատվության (այդ թվում՝ գույքի և եկամուտների հայտարարագրերի, նախընտրական հիմնադրամների հայտարարագրերի, ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցի) հասանելիությունը բաց տվյալների (open data) ձևաչափով, այսինքն՝ մեքենայաընթեռնելի, մշակման, վերօգտագործման և որոնման հնարավորությամբ:

Քարոզչություն

7. Հստակեցնել համայնքի ղեկավարի կողմից արգելված և չսահմանված վայրերում փակցված քարոզչական նյութերի հեռացման ժամկետը, ինչպես նաև սահմանել վարչական պատասխանատվություն տվյալ գործառույթը չիրականացնելու համար:

8. Արտաքին գովազդային վահանակներ տնօրինող կազմակերպությունների կողմից քարոզչանյութերի տեղադրման ոչ խտրական և անկողմնակալ պայմանների ապահովման պահանջը խախտելու դեպքերի համար նախատեսել վարչական պատասխանատվության միջոցներ:

9. Ձեռնարկել հստակ և տեսանելի քայլեր նախընտրական քարոզչության խախտումների դեպքում սահմանված պատասխանատվության միջոցների կիրառումը գործնականում ապահովելու համար:

Վարչական ռեսուրսի օգտագործում[1]

10. Վերանայել ՀՀ ընտրական օրենսգրքում ամրագրված վարչական ռեսուրսի սահմանումը՝ ներառելով պաշտոնատար անձանց հեղինակությունը օգտագործելուն վերաբերող դրույթներ և նախատեսելով դրանք վարչական ռեսուրսի օգտագործման արգելքի շրջանակներում: Միաժամանակ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում հանրային ծառայողի կողմից պաշտոնի հեղինակությունը հօգուտ որևէ կուսակցության կամ թեկնածուի օգտագործելու վերաբերյալ սահմանափակումը կիրառելի դարձնել նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ:

11. Վերանայել վարչական ռեսուրսի օգտագործման արգելքի գործող սահմանումը՝ չփոխկապակցելով այն վարչական ռեսուրս օգտագործողի կողմից ընտրությունների ժամանակ միայն իր օգտին առավելություն ստանալու նպատակի հետ:

12. Վերականգնել վարչական ռեսուրսի օգտագործման նախկին արգելքի շրջանակը՝ կիրառելի դարձնելով արգելքը պետական հաստատությունների, առողջապահական կազմակերպությունների, ուսումնական, նախադպրոցական ուսումնական հաստատությունների աշխատակիցների նկատմամբ:

13. Օրենքով սահմանափակել ՏԻՄ ընտրություններին ՀՀ վարչապետի կողմից համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակված անձանց տվյալ քաղաքական ուժի նախընտրական ցուցակի առաջին եռյակում որպես թեկնածու հանդես գալու հնարավորությունը՝ այդպիսով կանխարգելելով վարչական ռեսուրսի հնարավոր չարաշահումը:

14. Ընդլայնել վարչական ռեսուրսի օգտագործման ընդհանուր արգելքի գործողությունը ժամանակի մեջ՝ տարածելով սահմանափակումները նաև մինչև նախընտրական քարոզչության մեկնարկն ընկնող ժամանակահատվածի վրա, ընտրություններ նշանակելու մասին որոշումը հրապարակելու պահից:

15. Հանրային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար կազմակերպվող մրցույթների թեստերում (հարցաշարերում) և վերապատրաստման ծրագրերում ներառել վարչական ռեսուրսի չարաշահման վերաբերյալ հարցադրումներ, կարգավորումներ և նյութեր:

Նախընտրական հիմնադրամներ և ծախսեր

16. Նախատեսել, որ կուսակցությունների հաշվեհամարների մուտքերը հրապարակվեն ԿԿՀ կայքում, հնարավորինս՝ կենդանի ու ինքնաշխատ ռեժիմով՝ ապահովելով նվիրատվությունների չափի և որոշակի շեմից բարձր գումար (օրինակ՝ առնվազն 50,000 ՀՀ դրամ) մուծող նվիրատուների անուն-հայրանուն-ազգանունների տվյալների հրապարակումը և լիարժեք հասանելիությունը ընտրական ժամանակահատվածում, այլ ոչ թե հաջորդ տարում, որն անհնարին է դարձնում վերահսկողությունը:

17. Սահմանել պահանջ, որ աուդիտի ենթակա կուսակցությունների տարեկան հաշվետվությունների նախնական տարբերակները հրապարակվեն մյուս

[1] Վարչական ռեսուրսին վերաբերող մի շարք առաջարկների հիմնավորումները ներկայացված են Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամի «Ընտրական գործընթացներում վարչական ռեսուրսի չարաշահումը կանխարգելելու բնագավառում ներպետական օրենսդրության բացերի վերլուծություն՝ միջազգային չափորոշիչների եվ լավագույն միջազգային փորձի լույսի ներքո» հրապարակման մեջ:

կուսակցությունների տարեկան հաշվետվությունների հրապարակման համար օրենքով սահմանված ժամկետում՝ հետագայում աուդիտի արդյունքում դրանք ճշգրտված հաշվետվություններով լրացնելու հնարավորությամբ:

18. Կուսակցությունների տարեկան հաշվետվություններում, կուսակցությունների գույքի և եկամուտների հայտարարագրերում և նախընտրական հիմնադրամների հայտարարագրերում տվյալների լրացման և ներկայացման համար սահմանել միասնական մոտեցում, հստակեցնել ներկայացվող տվյալների ձևաչափը և մշակել համապատասխան մանրամասն ու մատչելի ուղեցույցներ:

19. Նախատեսել կուսակցությունների հաշվետվությունների, գույքի և եկամուտների հայտարարագրերի և նախընտրական հիմնադրամներ կատարվող մուծումների և ծախսերի հայտարարագրերի տվյալների համադրման, լիարժեք ստուգման ու վերլուծության պահանջ ԿԸՀ և ԿԿՀ կողմից:

20. Սահմանել պահանջ, որ նախընտրական քարոզարշավի համատեքստում կուսակցությունների կողմից իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ կնքված ծառայությունների մատուցման բոլոր պայմանագրերը հրապարակվեն կամ հասանելի դառնան դիտորդական կազմակերպություններին որպես ընտրական փաստաթղթեր:

21. Նախատեսել կուսակցությունների կողմից տարեկան հաշվետվությունների և նախընտրական հիմնադրամներ կատարված նվիրատվությունների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերի առցանց լրացման մեխանիզմ՝ ապահովելու, որ դրանք լինեն մեքենայաընթեռնելի ձևաչափով, մշակման, վերաօգտագործման և որոնման ենթակա:

22. Սահմանել ՎՎԾ-ի (վերահսկող մարմնի) կողմից ստուգման արդյունքներով կազմվող եզրակացությանն առաջադրվող հստակ պահանջներ և ձևաչափ՝ այդ թվում եզրակացություններում արտացոլելով ստուգման ընթացքում ձեռնարկված միջոցների մանրամասն նկարագրությունը, արձանագրելով բոլոր խախտումները՝ խախտման տեսակների և կիրառված մեթոդների մատնանշմամբ, ինչպես դրանց տրված ընթացքը և արդյունքները:

23. Քննարկման առարկա դարձնել ՀՀ քաղաքացի չհանդիսացող, սակայն ընտրելու և ընտրվելու իրավունք ունեցող անձանց կողմից կուսակցություններին ֆինանսավորելու արգելքով պայմանավորված ՏԻՄ ընտրությունների նախընտրական քարոզչությանն աջակցելու սահմանափակման իրավաչափությունը:

24. Վարչական փոխօգնության միջոցով ներդաշնակեցնել բանկերի կողմից ԿԸՀ-ին և ԿԿՀ-ին ներկայացվող մասնակից ուժերի հաշիվների մասին տեղեկանքները՝ խուսափելու տվյալներում անճշտությունից և անհամապատասխանությունից: Ամփոփ տեղեկանքները հրապարակել բաց տվյալների և միատիպ ձևաչափով:

25. Համագործակցել բանկային համակարգի ներկայացուցիչների հետ՝ ապահովելով չթույլատրված անձանց շրջանակի կողմից նախընտրական հիմնադրամ մուծում կատարելու հնարավորությունը, ինչը թե՛ վերահսկող մարմինների, թե՛ ընտրություններին մասնակից ուժերի համար ավելորդ ծանրաբեռնվածություն չի ստեղծի:

26. Նախատեսել իրավակարգավորում նախընտրական հիմնադրամին բնեղենով նվիրատվություններ կատարելու հնարավորություն ընձեռելու համար և սահմանել ԿԸՀ կողմից ապրանքների և ծառայությունների շուկայական արժեքը գնահատելու և ծախսերի սահմանաչափում ներառելու մեթոդաբանությունը:

27. Նախատեսել համամասնական ընտրակարգով անցկացվող ՏԻՄ ընտրություններում մասնակից ուժերի համար նախընտրական քարոզչությունը սկսվելուց հետո 20-րդ օրը նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը ներկայացնելու պահանջը:

Ընտրատեղամասերի կահավորում և քվեարկություն

28. Սահմանել ԸԸՀ-ների կողմից տեղամասային կենտրոնների ընտրությունը և դրանց մատչելիության վիճակը նախքան քվեարկության օրը վերահսկելու և համապատասխանությունը երաշխավորելու մեխանիզմներ՝ կանխարգելելու քվեարկության բնականոն ընթացքի ու գաղտնիության խաթարման դեպքերը, ինչպես նաև տեղաշարժման դժվարություններ ունեցող անձանց իրավունքների խախտումները:

29. Վերականգնել ԸԸՀ բոլոր նիստերն ընտրված մասնագիտացված կազմակերպության կողմից տեսանկարահանելու և հեռարձակելու օրենսդրական պահանջը՝ չսահմանափակելով այն միայն արդյունքների ամփոփման նիստերով և վերահաշվարկով:

30. Տեղամասային հանձնաժողովների նիստերը տեսանկարահանող սարքերը փոխարինել տեսաձայնագրող սարքերով:

Դիտորդական առաքելություններ

31. Նախատեսել մեխանիզմներ՝ ապահովելու դիտորդական առաքելությունների բարեվարքությունը, թափանցիկությունը և հաշվետվողականությունը:

32. Մշակել մանրամասն ընթացակարգեր և ձեռնարկել գործուն քայլեր հավատարմագրման դիմում ներկայացնող դիտորդական առաքելությունների/ կազմակերպությունների փաստաթղթերի ստուգման, իսկ հավատարմագրումից հետո՝ առաքելությունների ու դրանց անդամ հանդիսացող կազմակերպությունների, ինչպես նաև դրանցում ներգրավված դիտորդների կողմից անկողմնակալության պահանջների պահպանմանը հետևելու, քաղաքական ուժերին կողմ կամ դեմ քարոզչություն իրականացնելու փաստերը բացահայտելու, իսկ բացահայտելու դեպքում՝ նախատեսված իրավական հետևանքները կիրառելու ուղղությամբ:

33. Ճանաչել դիտորդական կազմակերպությունների իրավասուբյեկտությունը դիտորդի կարգավիճակից բխող իրավունքների խախտման վերաբերյալ գործերով, ինչպես նաև սահմանել դիտորդի և դիտորդական կազմակերպությունների կողմից օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումները վիճարկելու իրավունքը:

ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Ականատես» դիտորդական առաքելությունը հիմնվել է 2018 թ.: Նրա կազմում գործում են «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպությունը և «Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամը: «Ականատես»-ի նպատակն է հանրային անկողմնակալ հսկողության միջոցով նպաստել ազատ և արդար ընտրությունների անցկացմանը, ընտրական գործընթացների օրինավորությանը:

«Ականատես»-ը գործում է անկախ՝ պահպանելով անկողմնակալության սկզբունքը և զերծ մնալով այնպիսի գործողություն կատարելուց, որը կարող է մեկնաբանվել որպես աջակցություն, քարոզչություն կամ հակաքարոզչություն ընտրություններին մասնակցող որևէ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) օգտին կամ դեմ:

«Ականատես»-ը հանդիսանում է մի շարք միջազգային դիտորդական ցանցերի անդամ: Դիտորդական առաքելությունը անդամակցում է Global Network of Domestic Election Monitors (GNDEM), European Platform for Democratic Elections (EPDE) և European Network of Elections Monitoring Organizations (ENEMO) կազմակերպություններին:

Ֆեյսբուքյան էջ՝ https://www.facebook.com/akanatesditord

Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնը (ԹԻՀԿ) հիմնադրվել է 2000 թ.-ին Երևանում: ԹԻՀԿ առաքելությունն է կոռուպցիան նվազեցնելու և ժողովրդավարությունն ամրապնդելու ճանապարհով նպաստել լավ կառավարմանը Հայաստանում:

Հեռ.՝ +37410569589, էլ. հասցե՝ Info@transparency.am
կայք՝ transparency.am

Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամը (ԻԶՊՀ) հիմնադրվել է 2018 թ.-ին Երևանում: ԻԶՊՀ գործունեությունն ուղղված է ՀՀ-ում մարդու իրավունքների պաշտպանությանը և իրավական դաշտի բարեփոխումներին:

Հեռ.՝ + 37499515600, էլ. հասցե՝ ldpf.foundation@gmail.com
կայք՝ ldpf.am